

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

115

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տնտեսություն

Սփյուռքի նախարարությունը հանդես է եկել «հայկական առևտրական ցանցը ստեղծելու նախաձեռնությամբ

«Հայկական առևտրային ցանցը է մեծ առաքելություն ունի, կարծում է Վահրամ Փիրջանեանը

ՀՀ սփյուռքի նախարարություն

Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդածողովի առաջին նիստը

Երևանում աշխատանքները սկսեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդածողովը

ՀՀ սփյուռքի նախարարին առնթեր ատեանը քննարկել է «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» ծրագիրը

Սերտ համագործակցություն Պերմի երկրամասի հայ համայնքի հետ

ՀՀ ժողովրդական արտիստ, աշխարհահռչակ տեևոր Վահան Միրաբեանը պարգևատրուեց ՀՀ սփյուռքի նախարարության «Կոմիտաս» մեդալով

ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպուեց հեռակոնֆերանս Հայկալի հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ

«Միայն համախմբուածութեան արդիւնքում մենք կունենանք բոլորիս երազած հգօր Հայաստանը, բոլորիս ցանկալի հգօր Հայրենիքը»

ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն ընդունեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդածողովի մասնակիցներին

Երևանում տեղի ունեցաւ Ուրուգուայի «Կոունկ» համայնքի համերգը

Յիշենք հայ ժողովրդի բարեկամ Վուդրոյ Վիլսոնին

Ստորագրուեց համատեղ հռչակագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի եւ Արտաքսուած եւ վտարուած անձանց եւրոպական միության միջեւ

ՀՀ սփյուռքի նախարար Հրանտշ Յակոբեանն րնդունեց Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազօր դեսպան Մարսելայ Մարիայ Նիկողեմոսին

Սփյուռք

Ամն-ում ստեղծուել է Դիարբեքիի հայկական եկեղեցիների վերականգնման հիմնադրամ

Օլեգ Եսայեան. Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մեկը նոյնութեան պահպանումն է

Ստամբուլում տեղի է ունեցել բանակում սպանուած հայ պատանու լուղարկատրութիւնը

Սոֆիայի Երեսնեան պուրակում տեղի է ունեցել Հայոց Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցին նուիրուած հաւար

Արարական Միացեալ Էմիրութիւններում նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

Կ՛ակաթայի Սուրբ Պօղոս Մայր Տաճարում նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

Ղազախստանի եւ Ղրղզստանի մի շարք քաղաքներում յարգել են Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

Ապրիլի 24-25 Սիրիայում անցել են միջոցառումներ՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան զոհերի

Վաշինգտօնում թուրքերը եւ աղբրեջանցիները փորձել են ձախողել Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի ակցիան

Արամ Ա-ն կարեւորում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ ստեղծուած յանձնաժողովի գործունէութիւնը

Իրանի գլխաւոր հայկական համայնքները նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

Փարիզում Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին նուիրուած ցոյցին մօտ 5 հազար մարդ էր հաւարուել

Յայտարարութիւններ

«Վերածնունդ» Երաժիշտ-կատարողների ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Մրցոյթ-փառատօնն՝ ԱՐԴԷՆ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԴԱՐՉԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Տնտեսութիւն



Սփիւռքի նախարարութիւնը հանդէս է եկել «հայկական առեւտրական ցանցէ ստեղծելու նախաձեռնութեամբ

2011-04-29

Ապրիլի 29-ին ողջոյնի խօսքով հանդէս է եկել Հայաստանի սփիւռքի նախարար Հրանոյշ

Յակոբեանը: Նրա խօսքերով, վերջին 20 տարում սփիւռքի ներկայացուցիչները, մասնաւորապէս, գործարարները, հսկայական աւանդ են ունեցել Հայաստանի զարգացման ճանապարհին եւ խնդիրների լուծման մէջ: «այսօր եկել է սփիւռքի լաւագոյն ներկայացուցիչների ջանքերը միաւորելու պահը, եւ այս խորհրդածողովը պէտք է հարթակ ծառայի կառոյցների եւ ինստիտուցիոնալ մօտեցումների ստեղծման համար, որոնք յետագայում օգնելու են ակտիւացնել Հայաստան-սփիւռք, սփիւռք-սփիւռք յարաբերութիւնները տնտեսական ոլորտումէ,- ասել է նա:

Հրանոյշ Յակոբեանը նաեւ յոյս է յայտնել, որ համաժողովի ընթացքում ստեղծուելու է հայ արդիւնաբերողների ցանց, ընդլայնուելու են հայկական կազմակերպութիւնների հնարաւորութիւնները բիզնեսի ոլորտում, ստեղծուելու են նման կ'առոյցներ այն երկրներում, որտեղ դրանք չկան: «մեր ընդհանուր նպատակն ուժեղ, զարգացած եւ հզօր Հայաստանն է, իսկ դրա

համար անհրաժեշտ է ներգրավել հայության ողջ ներուժերը,- ասել է
Հրանոյշ Յակոբեանը:



**«Հայկական առևտրային ցանցի մեծ
առաքելություն ունի, կարծում է Վահրամ
Փիրջանեանը**

2011-04-29

Ինչպես նշել է Փիրջանեանը, «հայկական
առևտրային ցանցի ստեղծման նպատակը

Հայաստան-սփյուռք տնտեսական յարաբերությունների զարգացումն է եւ
սփյուռք-սփյուռք կապերի ամրապնդումը: Դրա հետ կապուած՝ նա յաւելել է,
որ ստեղծուելու է կառոյց, որը չի հետապնդելու քաղաքական եւ
մենատիրական նպատակներ, այլ ուղղուած է լինելու բիզնես-
հնարաւորութիւնների ընդլայնմանն ինչպէս Հայաստանում, այնպէս էլ
սփյուռքում: Միաժամանակ, նա յոյս է յայտնել, որ սփյոռքի գործարարները
կարող են արդիւնաւետ աշխատել միասին եւ մեծ բարձունքների հասնել:

Նա հաղորդել է, որ Կանադայի հայ գործարարների դրամաշրջանառութիւնը
կազմում է 10 մլրդ դոլար, այն դէպքում, երբ Հայաստանի բիւջէն 3 մլրդ դրամ
է:

ՀՀ սփյուռքի նախարարութան նախաձեռնութեամբ, Հայ-կանադական
գործարար խորհրդի եւ Հայաստանի առևտրաարդիւնաբերական պալատի
աջակցութեամբ ապրիլի 28-30-ը տեղի է ունենում «հայկական
առևտրական ցանցի ստեղծելու հիմնադիր խորհրդաժողովը, որին
մասնակցում են 30 մասնագէտներ աշխարհի 9 երկրներից, այդ թւում՝
Ֆրանսիայից, Բելգիայից, Կանադայից, ինչպէս նաեւ Հայաստանի
վարչապետ Տիգրան Սարգսեանը, Էկոնոմիկայի նախարար Տիգրան

Դաւթեանը, ՀՀ ԱԱՊ նախագահ Մարտին Սարգսեանը եւ Կ'անադա-
հայաստան գործարարների խորհրդի նախագահ Վահրամ Փիրջանեանը:



ՀՀ սփյուռքի նախարարութիւն
Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ
գործարարների միութիւնների
ներկայացուցիչների խորհրդաժողովի առաջին
նիստը

2011-04-30

Նիստի ընթացքում խորհրդաժողովին մասնակցող

Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ
գործարարների միութիւնների ղեկավարները եւ ներկայացուցիչները
համառօտ տեղեկութիւններ ներկայացրեցին իրենց կազմակերպութիւնների
գործունէութեան վերաբերեալ:

Հայաստանի առեւտրաարդիւնաբերական պալատի նախագահ Մարտին
Սարգսեանը մանրամասներ ներկայացրեց պալատի ստեղծման,
գործունէութեան վերաբերեալ: Հայաստանի առեւտրաարդիւնաբերական
պալատը 20 երկրում ստեղծել է ներկայացուցչութիւններ, որոնք
ներկայացնում են վերջինիս ծրագրերը: Պալատին կից ստեղծուել է
արբիտրաժային դատարան:

Հայաստանի արդիւնաբերողների եւ գործարարների միութեան գործադիր
տնօրէն Էդուարդ Կիրակոսեանը, ներկայացնելով միութեան
գործունէութիւնը, նշեց, որ հայ գործարարներն ու արդիւնաբերողները
միայնակ գործելու դէպքում կարող են որոշակի յաջողութիւններ ունենալ,
սակայն միասնաբար գործելու պարագայում կը հասնեն լուրջ

յաջողությունների:

Արցախի ներդրումային հիմնադրամի ներկայացուցիչ Մհեր Մխիթարեանը ծանօթացրեց հիմնադրամի հիմնական նպատակներին՝ նշելով, որ ներկայումս այն աշխատում է Արցախում գործող շուրջ 200 սուբյեկտների հետ:

Վազգէն Թերզեանը ներկայացրեց 1987թ. հիմնադրուած Կ'անադա-հայաստան գործարարների խորհրդի գործունէութիւնը: Տորոնտոյ քաղաքի եւ մերձակայ շրջանների հայ գործարարների թիւը գերազանցում է 1500-ը: Խորհուրդը, որն ունի 100-ից աւելի անդամներ, կարելոր դերակատարութիւն ունի Տորոնտոյի հայ համայնքում: Խորհրդի հիմնական նպատակն է՝ աջակցել հայ գործարարներին: Այն նաեւ խորհրդատուութիւն է տրամադրում համալսարանաւարտ երիտասարդներին, աջակցում բիզնես սկսելու գործում:

1999թ. ստեղծուած Հայ-ամերիկեան առեւտրական պալատի գործունէութեանը ծանօթացրեց Նիք Յակոբեանը՝ մասնաւորապէս անդրադառնալով պալատի կողմից Ամն-ում կազմակերպուած հայկական ապրանքների երկու եքսպո-ցուցադրութիւններին:

Աւստրալիայի հայկական առեւտրական պալատի ստեղծման եւ գործունէութեան վերաբերեալ մանրամասներ ներկայացրեց Գարոյ Սաթեանը: 60 անդամ ունեցող պալատն աջակցում է հայ գործարարներին, խրախուսում Հայաստանում եւ Արցախում տնտեսական գործունէութիւն

ծաւալելուն: Արդէն կան թէ Հայաստանում, եւ թէ Արցախում տնտեսական յաջող գործունէութիւն իրականացնող աւստրալահայ գործարարներ:

Միշէլ Դաւուդեանը ծանօթացրեց Հայ-Բելգիական առեւտրական պալատի գործունէութեանը՝ նշելով, որ Հայաստանի անկախացումից յետոյ Բելգիան առաջին երկրներից էր, որ սկսեց տնտեսական գործակցութիւն ծաւալել Հայաստանի Հանրապետութեան հետ, մասնաւորապէս ադամանդագործութեան ոլորտում:

Մարսելում 1992թ. ստեղծուած եւ 1996թ. գրանցուած Հայ-Ֆրանսիական առեւտրական պալատի գործունէութիւնը ներկայացրեց Ժակ Աւոյեանը: Պալատի գործունէութեան հիմնական նպատակն է համախմբել հայ գործարարներին եւ քաջալերել նրանց՝ տնտեսական գործունէութիւն ծաւալել Հայրենիքում: Պալատն անդամակցում է Ֆրանսիայի առեւտրական պալատների ասոցիացիային, ունի 250 անդամ: Ժ.Աւոյեանն առաջարկեց Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ գործարարների միութիւնների ներկայացուցիչների յաջորդ հաւաքն անցկացնել Մարսելում:

Փարիզում 1991թ. հիմնուած «հայ միջմասնագիտական միջազգային խմբաւորումէ կազմակերպութիւնը ներկայացրեց Արմէն Վալեանը: Նա նշեց, որ կազմակերպութիւնն իր մասնակցութիւնն է ունեցել աղէտի գոտու վերականգնմանը: Հիմնական նպատակն է սերտացնել կապը Հայաստանի եւ Ֆրանսիայի գործարարների միջեւ: Կազմակերպութիւնը Հայաստանում հիմնել է գրասենեակ, աջակցում են փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը: Նազարէթ Սաբունջեանը ծանօթացրեց Լիբանանի հայ գործարարների

ընկերակցության գործունեությանը: 1997-ին հիմնուած եւ 1999թ զբանցուած միութեանն անդամակցում են Լիբանանի տարբեր մասնագիտական ընկերակցութիւնների խորհրդի անդամներ եւ հայ գործարարներ: 1997թ. եւ 1999թ. ընկերակցութիւնը կազմակերպել էր Հայաստան-լիբանան գործարարների խորհրդաժողով, որոնց մասնակցելու համար հրաւիրել էր գործարարների նաեւ Հայաստանի Հանրապետութիւնից: Բազմաթիւ լիբանանցիներ տնտեսական գործունեութիւն են ծաւալու Հայաստանում եւ Արցախում:

մի քանի ամիս առաջ հիմնադրուած Հայ-լիբանանեան բարեկամութեան ընկերակցութիւնը ներկայացրեց Հրայր Դանձիկեանը: Ընկերակցութեանն անդամակցում են ինչպէս հայազգի, այնպէս էլ ոչ հայազգի լիբանանցիներ: Հիմնական նպատակն է զարգացնել հայ-լիբանանեան գործարար կապերը՝ նպաստելով տնտեսական համագործակցութեան ակտիւացմանը:



Երեւանում աշխատանքները սկսեց Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ գործարարների միութիւնների ներկայացուցիչների խորհրդաժողովը
2011-04-29

Ներկայ էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը,

ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դաւթեանը, Հայաստանի առեւտրաարդիւնաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսեանը, Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ գործարարների միութիւնների ղեկավարներ եւ ներկայացուցիչներ 9 երկրից՝ Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիայ, Բելգիա, Իրան, Լիբանան, Աւստրալիա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն եւ Հայաստանի Հանրապետութիւն, ինչպէս

նաեւ Հայրենիքում գործունէութիւն ծաւալած սփիւռքահայ գործարարներ:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան անունից ողջունելով խորհրդածողովի մասնակիցներին եւ բարի երթ մաղթելով խորհրդածողովի աշխատանքներին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը հակիրճ ներկայացրեց Հայաստանի Հանրապետութեան սոցիալ տնտեսական ներկայ իրավիճակը: Տ.Սարգսեանն անդրադարձաւ Հայաստանի տնտեսական համակարգի կառուցուածքին՝ ներկայացնելով արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, շինարարութեան, տեղեկատուական տեխնոլոգիաների, ծառայութիւնների եւ միւս ոլորտներում առկայ վիճակն ու զարգացման հեռանկարները: Վարչապետը ներկայացրեց նաեւ Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները, անդրադարձաւ ներդրումային մթնոլորտին, գնաճի կրճատմանն ուղղուած քայլերին:

Ողջունելով խորհրդածողովի մասնակիցներին հրաւերն ընդունելու համար՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը շնորհակալութիւն յայտնեց Կ՛անադա-հայաստան գործարարների խորհրդին՝ խորհրդածողովի կազմակերպմանն աջակցելու համար:

«անցնող 20 տարուայ ընթացքում՝ Հայաստանի անկախացումից յետոյ սփիւռքահայերը, մասնաւորապէս գործարարները, շատ մեծ ներդրում ունեցան մեր երկրի զարգացման, առաջընթացի գործում: Դրանք եղան եւ կազմակերպուած, եւ անկազմակերպ, եւ անհատական, եւ կառոյցների ու կազմակերպութիւնների միջոցով: Պետական ինստիտուտներ,

օրենսդրութիւն ստեղծելուց յետոյ, որը հնարաւորութիւն է տալիս Հայաստանն աւելի մատչելի եւ գրաւիչ դարձնելու ներդրումների համար, այսօր հասունացել է պահը աշխարհասփիւռ հայ ժողովրդի տնտեսական ներուժը համախմբելու: Այս խորհրդածողովը կարծում եմ, այն հաթակը պէտք է լինի, որ մենք ստեղծենք ինստիտուցիոնալ կ'առոյցներ՝ յետագայում առաւել ակտիւացնելու Հայրենիք-սփիւռք տնտեսական կապերը:

Հանրապետութեան նախագահը, ինչպէս գիտեք, դիմեց մեր հայ գործարարներին, ասելով, որ պէտք է կոտրել այն կարծրատիպը, որ Հայաստանում միայն բարեգործութիւն են անում: Հայաստանում ներդրումներ կատարելով՝ կարող էք գումար վաստակել, շահ ունենալ՝ նպաստելով Հայաստանի զարգացմանը: Հայաստանին այլեւս պէտք չեն հումանիտար ծրագրեր, Հայաստանին պէտք են զարգացման ծրագրեր, իսկ Հայաստանի տնտեսութիւնը ստեղծել է շահաւէտ հնարաւորութիւններ ներդրումների համար: Դրանից նախ եւ առաջ պէտք է օգտուեն աշխարհասփիւռ մեր հայ գործարարները: Այս համաժողովի ընթացքում, կարծում եմ մենք պէտք է լուծենք մի քանի խնդիր: Առաջինը՝ ստեղծել հայ առեւտրաարդիւնաբերողների ցանց, երկրորդ՝ օգնել տարբեր երկրներում գործող հայկական առեւտրական կառոյցներն ու գործարարների միութիւններին, որպէսզի ընդլայնեն իրենց հնարաւորութիւնները, երրորդ՝ այն երկրներում, որտեղ մենք չունենք նման կ'առոյցներ, պէտք է նաեւ ձեր աջակցութեամբ կարողանանք ստեղծել նման կ'առոյցներ, չորրորդ՝ պէտք է համատեղ ուժերով մշակել այնպիսի նախագծեր, որոնք կը նպաստեն Հայաստան-սփիւռք եւ Սփիւռք-սփիւռք կապերի ամրապնդմանը: Եւ, վերջապէս, կարծում եմ, որ մենք պէտք է ձեր գիտելիքները, փորձը,

հնարաւորութիւնները օգտագործենք, որպէսզի առաւել մատչելի, հրապուրիչ դառնա տնտեսական միջավայրը եւ խթանենք ներդրումները Հայաստանի Հանրապետութիւնում, որովհետեւ մեր բոլորի նպատակն է զարգացած, ուժեղ, հզօր Հայաստան ունենալ, իսկ այդ հզօր, ուժեղ Հայաստանի համար պէտք է ներգրաւենք ողջ հայութեան ուժերը, հնարաւորութիւնները: Շատ խորհրդանշական է, որ այն ցանցը, որ մենք այսօր ուզում ենք ստեղծել, կոչւում է «հացէ՛ հայ առեւտրաարդիւնաբերական ցանց, այսինքն՝ «հացե-ը պէտք է օգնի, որ մեր հայրենակիցները մնան Հայաստանում, ունենան աշխատանք, վաստակեն իրենց հանապազօրեայ հացը, կրճատեն արտագաղթը, կրճատեն աղքատութիւնը, զարգացնենք Հայաստանը նաեւ «հացե-ի միջոցովէ,- նշեց ՀՀ սփիւռքի նախարար Հ.Յակոբեանը:

Այնուհետեւ ջերմօրէն շնորհաւորելով Հայ առեւտրաարդիւնաբերական պալատների եւ գործարարների միութիւնների ներկայացուցիչների խորհրդածողովի մասնակիցներին եւ ցանկանալով արդիւնաւետ աշխատանք՝ Հայաստանի առեւտրաարդիւնաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսեանը ներկայացրեց իր ղեկավարած կառուցի գործունէութիւնը:

Կ'անադա-հայաստան գործարարների խորհրդի նախագահ Վահրամ Փիրջանեանը, ողջունելով խորհրդածողովի մասնակիցներին, ընդեց, որ ստեղծուելիք հայակական առեւտրային ցանցի հիմնախնդիրներն են Սփիւռքի եւ Հայաստանի տնտեսական զարգացումը, ինչպէս նաեւ Սփիւռք-սփիւռք գործակցութեան հզօրացումը: «մենք ուզում ենք աշխարհասփիւռ

հայկական գործարար աշխարհը միաւորել մէկ տանիքի տակ եւ ստեղծել կապեր՝ միասին աշխատելու, նոյն լեզուով իրար հետ խօսելու համարէ, - նշեց Վ.Փիրջանեանը:

Ողջոյնի խօսքերին սկսուեց խորհրդաժողովի առաջին նիստը, որը նախագահում էր Աւստրալիայի հայկական առեւտրական պալատի ղեկավար Վահէ Արթինեանը:



ՀՀ սփիւռքի նախարարին առնթքեր ատեանը քննարկել է «Սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» ծրագիրը
2011-04-29

Օրակարգում ընդգրկուած էին «սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցիէ,

«ուսումնական եւ հանրամատչելի գրականութեան առաքում Սփիւռքի կրթօջախներինէ ծրագրերը, ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչութեան հաշուետուութիւնը եւ ընթացիկ այլ հարցեր:

ՀՀ սփիւռքի նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսեանը ներկայացրեց Սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների ամառային դպրոցի ծրագրի նպատակները, հիմնական խնդիրները, գերակայութիւնները՝ անդրադառնալով ակնկալուող արդիւնքներին: Նա մասնաւորապէս նշեց, որ նպատակ է դրուած «սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցիէ շրջանակներում հայ երիտասարդ առաջնորդների համար ստեղծել փոխադարձ ճանաչողութեան դաշտ, կապել Հայրենիքի հետ, ծանօթացնել նախարարութեան համակարգին, ներքին եւ արտաքին քաղաքականութեան

առանձնայատկութիւններին, կազմակերպել հանդիպումներ պետական իշխանութեան համակարգի ներկայացուցիչների, Զլմ-երի հետ, մշակել յետագայ համագործակցութեան ձեւեր եւ միջոցներ: Դպրոցի աշխատանքը կրելու է պարբերական բնոյթ, կը կազմակերպուի իւրաքանչիւր տարի:

Խնդրին միջամտեց նախարարը՝ նշելով, որ Ռուսաստանի հայերի միութեան եւ Համաշխարհային հայկական կոնգրէսի նախագահ Արա Աբրահամեանի հետ քննարկելով նախարարութեան մի շարք ծրագրեր՝ որոշել են մի քանիսին համահեղինակել: Համաձայն այս պայմանաւորութեան նախատեսում է «սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» կազմակերպումը յետաձգել մօտ մէկ ամսով, որպէսզի հնարաւորինս շատ հայ երիտասարդներ մասնակցեն «սփիւռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցին» յաջորդող երտասարդական համաժողովին:

«ուսումնական եւ հանրամատչելի գրականութեան առաքում Սփիւռքի կրթօջախներին» ծրագրի ընթացքի մասին զեկուցեց ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարեանը: Նա ներկայացրեց ՀՀ պետական բիւջէի միջոցներով 2008-2010թթ. ընթացքում ձեռք բերուած եւ Սփիւռք փոխանցուած ուսումնական գրականութեան մասին հակիրճ տեղեկութիւններ: Ֆիրդուս Զաքարեանը նշեց նաեւ, որ 2008-2010թթ. ընթացքում Սփիւռքի կրթօջախների կողմից ամենամեծ պահանջարկ են ունեցել հիմնականում դասագրքերը: ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչութեան կողմից 2010թ. կատարուած աշխատանքների վերաբերեալ

հաշուետուութեամբ հանդէս եկաւ վարչութեան պետ Ատոմ Մխիթարեանը: Նա ներկայացրեց «մեր մեծերը, «արի տուն, «մայրենիի տարի, «սփիւռքի հայկական կրթօջախներին ուսումնական գրականութեան առաքում, «մէկօրեայ դպրոցների ցանցի ընդլայնում, «քոյր դպրոցներէ եւ այլ ծրագրերի շրջանակներում վարչութեան կողմից իրականացուած աշխատանքները, հաղորդում է ՀՀ սփիւռքի նախարարութեան մամլոյ ծառայութիւնը:

Սերտ համագործակցութիւն Պերմի երկրամասի հայ համայնքի հետ

2011-04-28

Վերը նշուած հանդիպման ընթացքում ի թիւս այլ հարցերի բարձրացուել էր նաեւ Պերմում մայիսին նախատեսուող «Պերմի սպիտակ գիշերներ» փառատօնին հայաստանեան որեւէ ջազային համոյթի մասնակցութեան եւ Հայաստանի եւ Պերմի երկրամասի զբօսաշրջիկային գործակալութիւնների միջեւ կապեր հաստատելուն օժանդակելու հարցերը:

Վերջին հարցի առնչութեամբ այսօր ՀՀ սփիւռքի նախարարութիւն էին հրաւիրուել ինչպէս Պերմի համայնքի ղեկավարի հոգեւոր եւ մշակութային հարցերով տեղակալ Կարէն Պապեանը, այնպէս էլ Ռուսաստանի Դաշնութեան հետ համագործակցող «Ադուենտուր», «

է, «Աւարայր», «Թրաւելոն ՍՊԸ» եւ էլի մի քանի տուրիստական գործակալութիւնների տնօրէններ:

Ձեռք բերուեցին պայմանաւորուածութիւններ, մշակուեցին անելիքները: Ծրագրի շրջանակներում նախատեսուում է այս տարուայ մայիսի 25-ին հայաստանեան մի քանի տուրօպերատորների այց Պերմ՝ մասնակցելու երկրամասի առեւտրաարդիւնաբերական պալատի կազմակերպած

միջոցառումներին:

Բարձրացուած առաջին հարցի կապակցութեամբ պայմանաւորուածութիւն
է ձեռք բերուել Հայաստանի պետական ջազային նուագախմբի հետ

(գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր դիրիժոր Արմէն Հիւսնունց)

Պերմում մայիսին նախատեսուող «Պերմի սպիտակ գիշերներ» փառատօնին
մասնակցելու համար:



ՀՀ ժողովրդական արտիստ, աշխարհահռչակ
տենոր Վահան Միրաքեանը պարգևատրուեց ՀՀ
սփյուռքի նախարարութեան «Կոմիտաս» մեդալով
2011-04-28

Բարեգործական համերգին մասնակցում էին

վաստակաշատ արուեստագէտներ Հայաստանից

եւ աշխարհի տարբեր երկրներից: Յոբելեանների առթիւ աշխարհահռչակ

տենորին շնորհաւորելու էին եկել պետական գործիչներ, ՄԱԿ-ի

փախստականների գլխաւոր յանձնակատարի գրասենեակի

ներկայացուցիչը, գիտութեան եւ մշակոյթի ոլորտի գործիչներ, հիւրեր

արտերկրից եւ մեծ վարպետի բազմաթիւ երկրպագուներ:

Ծննդեան 75 եւ ստեղծագործական գործունէութեան 50-ամեայ յոբելեանների

կապակցութեամբ, ինչպէս նաեւ հաշուի առնելով հայապահպանութեան,

հայ մշակոյթի զարգացման եւ տարածման գործում ներդրած նշանակալի

աւանդը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, յայտնի մեներգիչ, տենոր Վիեննայի

կոնսերվատորիայի պրոֆէսոր Վահան Միրաքեանին Հ.Յակոբեանը

պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարութեան «Կոմիտաս» մեդալով:

«Ես սիրով եւ ջերմութեամբ եմ շնորհաւորում մեր սիրելի վարպետի վաստակած փառահեղ յոբելեանները: Բնութիւնը շռայլ է գտնուել Վահան Միրաքեանի նկատմամբ՝ նրան օժտելով այսպիսի հոյակապ, հզօր ձայնով, որը յիսուն տարի շարունակ ծառայեցնում է արուեստին, հայ արուեստին, հայ բեմին, ինչպէս նաեւ օտարազգի նրբաճաշակ հասարակութեանը: Շնորհակալութիւն Ձեզ, վարպետ, որ Դուք կարողացել էք հայ երգը, հայ արուեստը ներկայացնել աշխարհի շատ ու շատ յայտնի բեմերում: Այսօր, այս դահլիճում ներկայ են մարդիկ, ովքեր ճանաչել եւ Ձեր երիտասարդական տարիներին երկրպագել են Ձեզ՝ հիացած Ձեր ձայնով, Ձեր արուեստով, ովքեր կարօտել եւ սպասել են Ձեզ եւ այսօր եկել են լսելու եւ հիանալու Ձեզնով: Այս երեկոյին ներկայ են նաեւ մարդիկ, ովքեր Ձեր մասին ուղղակի լսել են, գիտեն, բայց ուզում են տեսնել, թէ արդեօք 75 տարեկան երիտասարդն ինչպէս է երգելու, ինչպէս է կարողանալու մի ամբողջ երեկոյ հաճոյք պատճառել մեր հանդիսատեսին»,- նշեց նախարար Հ.Յակոբեանը:

Երեկոյի ընթացքում եղան բազմաթիւ շնորհաւորանքներ եւ պարգեւներ: Վահան Միրաքեանը պարգեւատրուեց նաեւ ՀՀ մշակոյթի նախարարութեան ոսկէ մեդալով, նրան շնորհուեց Երեւանի Կոմիտասի արւան պետական կոնսերվատորիայի պատուաւոր պրոֆէսորի կոչում:



ՀՀ սփյուռքի նախարարութիւնում կազմակերպուեց հեռակոնֆերանս Հալէպի հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցութեամբ

2011-04-28

Հայաստանից հեռակոնֆերանսին մասնակցում էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանդ Յակոբեանը

եւ նախարարութեան աշխատակազմի բոլոր վարչութիւնների պետերը:

Հալէպում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսարանում տեսակոնֆերանսին մասնակցում էին Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոս Աշոտ Մանուկեանը, Սիրիայում ՀՀ սփիւռքի նախարարի խորհրդական Լենա Հալաջեանը, Հալէպի հայկական վարժարանների տնօրէններ, ուսուցիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Նախարար Հ.Յակոբեանը ողջունելով տեսակոնֆերանսի մասնակիցներին՝ ներկայացրեց ՀՀ սփիւռքի նախարարութեան 2011թ. ծրագրերը՝ մասնաւորապէս անդրադառնալով Սփիւռքի ներուժի համախմբման նպատակով այս տարի ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից կազմակերպուելիք համահայկական համաժողովներին («Առեւտրաարդիւնաբերական պալատների ղեկավարների», «Սփիւռքի զարգացման հեռանկարները գլոբալացուող աշխարհում», պլաստիկ վիրաբոյժների, հայ բժիշկների, Սփիւռքի կազմակերպութիւնների ներկայացուցիչների եւ համայնքների ղեկավարների, հայ խոհարարների, հայ սրտաբանների, հայ ֆերմերների համաժողովներ, Ճարտարապետների եւ շինարար-ճարտարագէտների համահայկական երկրորդ համաժողով, «Երիտասարդ լրագրողների վերապատրաստման դասընթաց-հաւաք», Երիտասարդ առաջնորդների ամառային դպրոց եւ այլն):

Հ.Յակոբեանն անդրադարձաւ նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան «Մեր մեծերը», «Արի տուն» ծրագրերին, ծանօթացրեց նախախարարութեան կողմից ստեղծուած էլեկտրօնային գրադարանին:

Հալէպից հեռակոնֆերանսի մասնակիցները բազմաթիւ հարցեր ուղղեցին նախարարին, որոնք վերաբերում էին սփիւռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, արեւմտահայերէնի միասնական դասագրքի ստեղծմանը եւ այլն:

Հեռակոնֆերանսի ընթացքում Հալէպում ՀՀ գլխաւոր հիւպատոսարանում կատարուեց նաեւ ՀՀ սփիւռքի նախարարութեան կազմակերպած «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով շարադրութեան մրցոյթի յաղթող աշակերտների պարգևատրման արարողութիւն:



«Միայն համախմբուածութեան արդիւնքում մենք կունենանք բոլորիս երազած հզօր Հայաստանը, բոլորիս ցանկալի հզօր Հայրենիքը»

2011-04-28

Ողջունելով երիտասարդութեանը՝ նախարարը կարեւորեց այն, որ երիտասարդները յատկապէս

այս օրերին են Հայրենիքում, երբ նշում է Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցը եւ Յիսուսի հրաշափառ յարութիւնը:

Հ.Յակոբեանն ուսանողութեանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետութեան Նախագահի կողմից ՀՀ սփիւռքի նախարարութեան առջեւ բարձրացրած երեք կարեւորագոյն խնդիրները՝ հայապահպանութիւն, հայ ներուժի յայտնաբերում՝ ի շահ Հայրենիքի հզօրացման եւ հայրենադարձութիւն:

Նախարարը նաեւ ամրագրեց այն արմատական փոփոխութիւնները, որոնք

տեղի են ունեցել Հայրենիք-սփիւռք կապերի ամրապնդման ուղղութեամբ տարուող քաղաքականութեան մէջ, դրանք ներկայացնելով կարգախօսների տեսքով՝ «Հայաստանը բոլոր հայերի Հայրենիքն է», «Հայ է նա, ով իրեն հայ է զգում», «Յուրաքանչիւր հայ պէտք է իր ապրած երկրի օրինապահ եւ օրինապաշտ քաղաքացին լինի, սակայն երբեք չմոռանալով եւ չհեռանալով իր հայ ինքնութիւնից», «Հայն իր Հայրենիքին ծառայելուց բացի պէտք է նաեւ շահ ստանա», «Սփիւռքը բազմաշերտ է, բազմակարծիք եւ նրա հետ պէտք է աշխատել տարածաշրջանային առանձնայատկութիւններից ելնելով»:

Այս վերջին՝ Սփիւռքը բազմաշերտ է, բազմակարծիք եւ նրա հետ պէտք է աշխատել ըստ տարածաշրջանային առանձնայատկութիւնների, կարգախօսի առնչութեամբ նախարարը յաւելեց,- «Ճիշտ է Սփիւռքը բազմակարծիք ու բազմաշերտ է, սակայն համահայկական, համազգային հարցերում բոլորս պէտք է միասնական եւ մէկ մտածողութիւն ունենանք եւ դա կարծում եմ, արդէն այդպէս է, որովհետեւ չկայ հայ, որն անտարբեր լինի Լեռնային Ղարաբաղի, Ցեղասպանութեան խնդիրներում: Եւ բոլորս միասին, համախմբուած պէտք է պայքարենք Սփիւռքի ուժացման դէմ պայքարի, հայ եկեղեցու շուրջ համախմբուելու եւ Հայաստանը հզօրացնելու համար: Միայն այս հարցերում համախմբուածութեան արդիւնքում մենք կ'ունենանք բոլորիս երազած հզօր Հայաստանը, բոլորիս համար ցանկալի հզօր Հայրենիք»:

ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը երիտասարդութեանը

ներկայացրեց նաև նախարարության երիտասարդական ծրագրերը ու դրանցում նրանց հնարաւոր դերակատարութիւնը:



**ՀՀ սփյուռքի նախարար Հրանտյշ Յակոբեանն
ընդունեց Հայ առևտրաարդիւնաբերական
պալատների եւ գործարարների միութիւնների
ներկայացուցիչների խորհրդաժողովի
մասնակիցներին**
2011-04-28

Խորհրդաժողովը կազմակերպոււմ է ՀՀ սփյուռքի նախարարութան նախաձեռնութեամբ Հայ-կանադական գործարար խորհրդի եւ Հայաստանի առևտրաարդիւնաբերական պալատի աջակցութեամբ: Խորհրդաժողովին կը մասնակցի շուրջ 30 մարդ 9 երկրից՝ Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիայ, Բելգիա, Իրան, Լիբանան, Աւստրալիա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն եւ Հայաստանի Հանրապետութիւն: Խորհրդաժողովի բացումը տեղի կունենայ ապրիլի 29-ին ժամը 10:00-ին Հայաստանի առևտրաարդիւնաբերական պալատի նիստերի դահլիճում՝ Խանջեան 11 հասցեով:

Խորհրդաժողովի բացմանը նեկայ կը լինի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը:

Բացման խօսքով հանդէս կը գայ ՀՀ սփյուռքի նախարար Հրանտյշ Յակոբեանը, իսկ ողջոյնի խօսքով՝ Հայաստանի առևտրաարդիւնաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսեանը եւ Կանադա-Հայաստան գործարարների խորհուրդի նախագահ Վահրամ Փիրջանեանը:

Ապրիլի 30-ին խորհրդածողովի մասնակիցներին կընդունի ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը:

Խորհրդածողովի մասնակիցները կայցելեն նաև Հայոց Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը յաւերժացնող Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Խորհրդածողովի անցկացման հիմնական նպատակն է՝ ստեղծել «Հայկական առևտրական ցանց» ընկերակցութիւն, որի գործունէութեան առանցքային խնդիրներն են՝ ձեւաւորել գործող հայկական գործարար ընկերակցութիւնների (միաւորումների) համահայկական ցանց, խթանել առևտրաարդիւնաբերական պալատների կամ բիզնես խորհուրդների ձեւաւորման գործընթացը եւ նպաստել ծագումով հայ գործարարների ներգրաւմանը վերոյիշեալ կառոյցներում, նոր գործարար ընկերակցութիւնների ստեղծմանը Մփիւռքի այն երկրներում, որտեղ դրանք դեռ ձեւաւորուած չեն: Գործարար ընկերակցութիւնների եւ ներգրաւուած անդամների միջեւ հաղորդակցութիւնն ապահովելու նպատակով ստեղծել համագործակցութեան հարթակ՝ նպաստելով բիզնես նախագծերի, ծրագրերի համատեղ իրականացմանը:



Երեւանում տեղի ունեցաւ Ուրուգուայի «Կռունկ» համոյթի համերգը

2011-04-27

«Այս համերգը Լատինական Ամերիկայում ապրող հայերի համախմբման եւ հայապահպանութեան արդիւնք է: Կոմիտասեան «կռունկը» է միշտ լսում

ենք սրտի տրոփիւնով: Խորհրդանշական է որ այս համերգը տեղի է

ունենում Մեծ Եղեռնի զոհերի յիշատակման արարողութիւնից մի քանի օր
յետոյ: Ուրուգուայը առաջիններից էր, որ ընդունեց Հայոց
ցեղասպանութիւնը, եւ ես վստահ եմ, որ դրանում մեծ դեր խաղաց նաեւ
Ուրուգուայի հայկական համայնքը», - ասաց ՀՀ սփիւռքի նախարար Հրանոյշ
Յակոբեանը:

Շնորհակալութիւն յայտնելով խմբի ղեկավար Ալվարոյ Յակոբեանին՝
նախարարը նրան յանձնեց ՀՀ սփիւռքի նախարարութեան պատուոգիրը:

«Կռունկ»-ի համերգը բացում է ՀՀ սփիւռքի նախարարութեան կողմից
կազմակերպուած 20 համերգների շարքը՝ նուիրուած Հայաստանի
Հանրապետութեան անկախութեան 20 ամեայ յոբելեանին: Երեւանեան
համերգից յետոյ երգչախումբը ելոյթ կ'ունենայ Գիւմրիում եւ Արցախումե-
ներկայացրեց նախարարը:

Համերգին ներկայ էին մի շարք պաշտօնատար անձինք, Հի-ում
հաւատարմագրուած տարբեր երկրների դեսպաններ եւ մշակոյթի
գործիչներ:

Հբըմ-ի Մոնտեիդէոյի կամերային երգչախումբը հիմնադրուել է 1942 թ-ին
եւ Հարաւային Ամերիկայի տարածաշրջանում համարում է երգչախմբային
արուեստում իր ուրոյն տեղն ունեցող համոյթ: 1993թ-ին ձեւաւորում է
Ֆիլհարմոնիկի «կռունկէ երչախումբը, որը սկզբում ունէր միայն 12
անդամներ եւ բոլորը տարածաշրջանի ամենախոշոր վարժարաններից
մէկի՝ Ալէք Մանուկեան դպրոցի սաներն էին: Այժմ այն բաղկացած է 31
անդամից: Երգչախումբը հիմնականում կատարում է հայկական,

ժողովրդական, դասական երգեր:

Երգչախմբի գեղարուեստական ղեկավարն է մաեստրոյ Ալվարոյ

Յակոբեանը: Նա ղեկավարել է Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նուագախումբը:

2007թ-ին պարգևատրուել է Ուրուգուայի Հանրապետության «մոռուսիե

մեդալով, որը համարում է մշակութային ամենաբարձր պարգևը:

Երգչախումբը հանդես է եկել Ուրուգուայի մի շարք դահլիճներում:



Յիշենք հայ ժողովրդի բարեկամ Վուդրոյ Վիլսոնին

2011-04-27

Ծրագրի շրջանակներում ապրիլի 27-ին Երեւանի N136 հիմնական դպրոցում կազմակերպուեց բաց

դաս, որն անցկացրեց Վ. Բրիւսովի անուն

պետական լեզուաբանական համալսարանի երոպագիտության բաժնի

մագիստրոս Անի Աբրահամեանը: Վերջինս ներկայացրեց ԱՄՆ-ի 28-րդ

նախագահ, հայ ժողովրդի մեծագոյն բարեկամ, հայոց պետականության

ստեղծման ջատագով Վուդրոյ Վիլսոնի աշխատանքային գործունեութիւնը՝

շեշտը դնելով նրա հայանպաստ դիրքորոշմանը:

Բաց դասի ւարտին ՀՀ սփյուռքի նախարարության գիտակրթական

ծրագրերի բաժնի պետ Ս. Համբարեանը յուշանուէրներ յանձնեց դպրոցի

տնօրինութեանը՝ երախտագիտութեան խօսք յայտնելով արդիւնաւետ

համագործակցութեան համար: Նշենք, որ N 136 դպրոցը ՀՀ սփյուռքի

նախարարութեան կողմից իրականացուող ծրագրերում հանդես է եկել

բազմաթիւ միջոցառումներով՝ մասնաւորապէս Մայրենի լեզուի օր, «Մեր

մեծերը» ծրագրերի շրջանակներում: Այն հայաստանեան եզակի

դպրոցներից է, որտեղ ստեղծուել է «Սփյուռք» կենտրոն թանգարան:

Բաց դասը համընկաւ դպրոցի սաների մասնակցութեամբ կազմակերպուած միջոցառման հետ՝ նուիրուած Ծաղկազարդի եւ Սուրբ Զատկի տօներին: Աշակերտները ներկայացրեցին աւանդական Ծաղկազարդի եւ Սուրբ Զատկի տօները՝ թատերականացուած սցենարով:

Միջոցառման աւարտին ելոյթ ունեցաւ դպրոցի տնօրէն տիկին Գրետա Թունեանը, ով պատրաստակամութիւն յայտնեց շարունակել համագործակցել եւ աջակցել նախարարութեան ծրագրերին՝ մասնաւորապէս «Արի տուն» ծրագին, որի իրականացման համար ներկայացրել է շուրջ երկու տասնեակ հիւրընկալ ընտանիքների յայտադիմում:

Յարկ է նշել, որ ՀՀ սփյուռքի նախարարութեան Հայաստանի եւ Սփյուռքի հայկական կրթօջախների համար «Քոյր դպրոցներ» ծրագրով նախատեսուում է բարեկամութեան կամուրջ հաստատել N 136 դպրոցի եւ Բոստօնի Սուրբ Ստեփանոս վարժարանի միջեւ:



Ստորագրուեց համատեղ հոշակագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի եւ Արտաքսուած եւ վտարուած անձանց երոպական միութեան միջեւ

2011-04-26

Ներկայ էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանդ Զակոբեանը, Հայաստանի Հանրապետութիւնում

Իտալիայի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Բրունոյ

Սկապինին, Արտաքսուած եւ վտարուած անձանց երոպական միութեան

գործադիր տնօրէն Էնրիկոյ Նէամին եւ այլք:

Յուշագիրը ստորագրող կողմերին միաւորում է այն գիտակցութիւնը, որ 20-րդ դարում Եւրոպայում իրականացուած զանգուածային հալածանքների, բռնի տեղահանման եւ ցեղասպանութիւնների պատմական յիշողութիւնը, որպէս աշխարհամասի պատմական եւ բարոյական ժառանգութեան մաս, պէտք է օրինակ ծառայի եւրոպացիների նոր սերնդի քաղաքացիական եւ պատմական տեղեկացուածութեան ձեւաւորման գործում: Ստորագրելով յուշագիրը՝ Արտաքսում եւ վտարում անձանց եւրոպական միութիւնը եւ ՀՀ սփիւռքի նախարարութեան հովանու ներքոյ գործող «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը նպատակ ունեն համագործակցել Հայոց Ցեղասպանութեան՝ որպէս եւրոպական քաղաքացիական հասարակութեան ժառանգութեան անբաժանելի մասի, վերաբերեալ տեղեկացուածութեան ձեւաւորմանն ուղղուած նախագծերում:

Նախատեսում է Եւրոպական յանձնաժողովի եւ Եւրոպական խորհրդի կառոյցների հետ նախաձեռնել համակարգուած գործողութիւններ՝ պատմական, աւանդական գեղարուեստական եւ ճարտարապետական ժառանգութեան տարածմանն ուղղուած ծրագրեր հիմնելու եւ իրականացնելու համար: Հայոց Ցեղասպանութեան մասին տեղեկատուութիւն տարածելու նպատակով «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի եւ ԱԻԱԵՄ -ի, ինչպէս նաեւ Սփիւռքի կառոյցների միջեւ կայուն յարաբերութիւններ հաստատելու համար նախատեսում է հիմնել ցանց՝ օպերատիւ կապ հաստատելով մշակութային, հետազօտական կազմակերպութիւնների հետ:

Նախարար Հրանոյշ Յակոբեանը կարելուրելով համագործակցութիւնը «նորավանքէ ԳԿՀ-ի եւ ԱԻԱԵՄ -ի միջեւ՝ նշեց, որ մեծ նշանակութիւն եւ խորհուրդ ունի հոչակագրի ստորագրումն այս օրերին, երբ հայ ժողովուրդը ոգեկոչում է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը:

Դեսպան Սկապինին նշեց, որ հոչակագրի ստորագրումը շատ կարեւոր նախաձեռնութիւն է ոչ միայն Հայաստան-Իտալիայ, այլ նաեւ Հայաստան-Եւրամիութիւն համագործակցութեան շրջանակներում, եւ կարող է օրինակ լինել նման յանցագործութիւնների դէմ պայքարի գործում: Անհրաժեշտ է կրթել եւ իրազեկել մարդկանց՝ կանխելու նման յանցագործութիւնները:



**ՀՀ սփյուռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն
ընդունեց Բրազիլիայի Դաշնային
Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր
դեսպան Մարսելայ Մարիայ Նիկողեմոսին
2011-04-26**

Ողջունելով հիւրերին՝ Հ.Յակոբեանը

ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարութեան

առաջիկայ ծրագրերը: Անդրադարձ կատարուեց Բրազիլիայի հայ համայնքի հիմնախնդիրներին:

Ներկաները քննարկեցին ՀՀ սփյուռքի նախարարութեան եւ Հայաստանում Բրազիլիայի դեսպանութեան համատեղ ջանքերով իրականացուելիք «Հայերի հետքերը Բրազիլիայում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում սեպտեմբերին Հայաստանի ազգային պատկերասրահում Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակի եւ Բրազիլիայի Դաշնային Հանրապետութեան անկախութեան

օրուայ առթիւ նախատեսուում է կազմակերպել բրազիլահայ նկարիչների ստեղծագործութիւնների ցուցահանդէս՝ «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագրով:

Ղեկավար Մ.Նիկողոսյանը նախարար Հ.Յակոբեանին տեղեկացրեց, որ Բրազիլիա կատարելիք առաջիկայ այցի ընթացքում նախատեսուում է հանդիպել հայ համայնքի ներկայացուցիչներին, ծանօթանալ նրանց հիմնախնդիրներին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարուեց նաեւ Սան Պաուլոյի հայագիտական կենտրոնին, որին աջակցում է ՀՀ սփիւռքի նախարարութիւնը:



Սփիւռք
Ամն-ում ստեղծուել է Դիարբեքիի հայկական եկեղեցիների վերականգնման հիմնադրամ
2011-04-30

Ժողովի ընթացքում քննարկուել են ֆինանսական հարցեր՝ կապուած եկեղեցու վերականգնման հետ: Հիմնադրամի անդամների շարքում Ամն-ում ՀԱԷ Արեւելեան թեմի ղեկավար արքեպիսկոպոս Խաժակ Բարսամեանն է, Կոստանդնուպոլսի պատրիարքութեան արքոռակից պատրիարք Արամ Աթեշեանը եւ Մակ-ում Հայաստանի ղեկավար Կարէն Նազարեանը:

Մբ. Կիրակոս եկեղեցին կառուցուել է 15-րդ դարում: 1880-ին վերակառուցուել եւ ընդլայնուել է հրդեհից յետոյ: Այն ներկայ պահին Անատոլիայի ամենամեծ եկեղեցին է, յայտնի է իր եօթ խորաններով, կարող

է տեղաւորել 2500 հոգի:

Եկեղեցին պատկանում է ՀԱԷ Կոստանդնուպոլսի պատրիարքութեանը, Ստամբուլում արդէն խումբ է ստեղծուել եկեղեցու վերականգնման աշխատանքները որոշելու համար, որն անհրաժեշտ է հայերի ապագայ սերունդների համար, գրում է The Armenian Weekly-ն:



Օլեգ Եսայեան. Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մէկը նոյնութեան պահպանումն է

2011-04-28

Նախօրէին գիտաժողովի մասնակիցների հետ հանդիպմանը Օլեգ Եսայեանը

երախտագիտութիւն էր յայտնել Նիժեգորոդեան հայ համայնքի ղեկավարութեանը նման միջոցառում կազմակերպելու համար, այն նուիրուած է Հայաստանի անկախութեան հռչակման 20-ամեակին: Օլեգ Եսայեանը պատմել է դեսպանատան գործունէութեան մասին, շեշտել առաջնահերթութիւններն ու խնդիրները, ինչպէս նաեւ պատասխանել հաւաքուածների հարցերին: Նրա կարծիքով, Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մէկն է ապահովել հայրենակիցների ինտեգրումը ռուսական հասարակութեան մէջ եւ նոյնութեան պահպանումը:

Գիտաժողովը կը բացուի լիազումար նիստով, որից յետոյ մասնակիցները կը քննարկեն տարբեր բնագաւառների արդիական խնդիրները: Միջոցառումը կ'աւարտուի «Ժամանակակից ռուս-հայկական յարաբերութիւններ՝ խնդիրներ, ձեռքբերումներ եւ հեռանկարներէ կլոր սեղանով, ինչպէս նաեւ

ամփոփիչ հոչակագրի ընդունմամբ, հաղորդում է «հայերն աշխարհում Է պորտալը:



Ստամբուլում տեղի է ունեցել բանակում սպանուած հայ պատանու յուղարկատրութիւնը
2011-04-28

Ինչպէս գրում է թուրքական Radikal-ը, սպանուած պատանու յիշատակը եկել էին յարգելու ինչպէս հայեր, այնպէս էլ թուրքեր: Ծաղկեպսակներ են դրուել ինչպէս զինուորականներից, այնպէս էլ տեղական իշխանութիւններից, այդ թւում Ստամբուլի քաղաքապետից: Զինուորի թաղմանն ու հոգեհանգստի արարողութեանը մասնակցել է ՀԱԷ Կոստանդնուպոլսի աթոռակից պատրիարք, արքեպիսկոպոս Արամ Աթեշեանը, ինչպէս նաեւ Հրանտ Դինքի այրին:

Սեւակին թաղեցին Ստամբուլի Շիշլի թաղամասի հայկական գերեզմանատանը:

Ապրիլի 24-ին Բաթմանի գաւառի զորամասերից մէկում սպանուեց ծագումով հայ 25-ամեայ Սեւակ Շահին Բալքրչին: Մահուան հանգամանքների մասին տեղեկութիւնները տարաբնոյթ են ու հակասական: Զեկոյցներից մէկում ասում է, որ «նայ սպանուել է զէնքի հետ անզգոյշ վարուելու արդիւնքում: Մէկ այլ վարկածով, նրան միտումնաւոր սպանել են ատրճանակից:



Սոֆիայի Երեւանեան պուրակում տեղի է ունեցել Հայոց Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցին նուիրուած հաւաք
2011-04-27

Ինչպէս յայտնում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը,

հանրահաւաքին ելոյթներով հանդէս եկան Բուլղարիայում Հայաստանի դեսպան Արսէն Սիոյեանը, «երեւանէ թերթի գլխաւոր խմբագիր, Բուլղարիայի «հայ Դատիէ յանձնախմբի անդամ տիկին Վարդանուշ Թօփաքքաշեանը, բուլղարական «լերեպեոէ ամսագրի խմբագիր եւ քաղաքական մեկնաբան Լիւբեն Դիլովը:

Հայաստանի դեսպանը նշեց, որ մարդկութեան դէմ ուղղուած այդ յանցագործութիւնը առ այսօր միջազգային ողջ հանրութեան կողմից չի դատապարտուել, թէւ շատ երկրներ՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Եւրախորհուրդը, եւրոպական մի շարք երկրներ, Հարաւային Ամերիկայի եւ ԱՄՆ մի քանի նահանգներ արդէն իրենց ճշմարիտ խօսքն են ասել: Իր ելոյթում դեսպանը կարեւորեց նաեւ Բուլղարիայի Հանրապետութեան մի շարք քաղաքային եւ համայնքային խորհուրդների կողմից 1915 թ.

Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու եւ դատապարտելու վերաբերեալ արդէն մէկ տասնեակից աւելի ընդունուած որոշումները:

Վառնայի հայ առաքելական «սուրբ Սարգիսէ եկեղեցում ի յիշատակ Եղեռնի զոհերի եկեղեցու բակում տեղադրուած խաչքարի մօտ տեղի ունեցաւ պսակի զետեղման եւ մոմավառութեան արարողութիւն:

Եկեղեցու բակում տեղի ունեցաւ հանրահաւաք որից յետոյ ներկաները պաստառներով բողոքի երթով շարժուեցին դէպի քաղաքի կենտրոն:

Ապրիլի 24-ին Պլովդիւի Զինուորական ակումբի մօտից մեկնարկեց բողոքի երթ դէպի Պլովդիւի հայ առաքելական «սուրբ Գեորգէ եկեղեցի բակում տեղադրուած 1915թ. Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակին խաչքարը, որտեղ եւ տեղի ունեցաւ լռութեան րոպէ, պսակի զետեղման եւ

մոմավառության արարողություն: Ապրիլի 25-ին Պլովդիւի հայկական գերեզմանատանը սգոյ պատարագ մատուցուեց 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին:

Ապրիլի 25-ին Բուրգասի հայ առաքելական «սուրբ Խաչէ եկեղեցում սգոյ պատարագ մատուցուեց անմեղ զոհերի յիշատակին:

Յեղասպանութեան զոհերի յիշատակի յուշարձանի մօտ տեղի ունեցաւ հանրահաւաք, լռութեան րոպէ, ծաղկեպսակի զետեղման եւ մոմավառութեան արարողութիւններ: Հանրահաւաքին ներկայ էին Բուրգասի քաղաքապետարանի, համայնքային խորհրդի , ԲՀ ԲԺԺ պատգամաւորներ, բուլղար հասարակական-քաղաքական գործիչներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Նոյն երեկոյ Բուրգասի ազգային վարժարանի դահլիճում ցուցադրուեց իտալացի հանրայայտ կինոբեմադիչներ Տաւիանի եղբայների նկարահանած «արտոյտների ազարակէ գեղարուեստական ֆիլմը:

Արաբական Միացեալ Էմիրութիւններում նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը

2011-04-27

Յուշ-երեկոյի սկզբում ներկաները մէկ րոպէ լռութեամբ յարգեցին 1915 թ. Օսմանեան կայսրութեան կողմից կազմակերպուած եւ իրականացուած Հայոց Յեղասպանութեան 1.5 միլիոն նահատակների յիշատակը, որից յետոյ ցուցադրուեց Մեծ Եղեռնին նուիրուած «աղէտէ փաստավաւերագրական տեսաֆիլմը:

Այնուհետեւ, Սրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցուեց հոգեհանգստեան պաշտօն: Աւարտից յետոյ եկեղեցու բակում

կանգնեցուած՝ Հայոց Մեծ եղեռնի զոհերի յիշատակը խորհրդանշող խաչքար-յուշարձանին ծաղկեպսակ եւ ծաղիկներ դրուեցին Ամէ-ում ՀՀ դեսպանութեան, համայնքային կազմակերպութիւնների եւ ներկաների անունից, որին յաջորդեց մոմավառութեան ասանդական արարողութիւնը:

Հայոց Ցեղասպանութեան 96-րդ տարելիցին նուիրուած ոգեկոչման երեկոները կը շարունակուեն ապրիլի 29-ին եւ 30-ին ԱՄԷ Շարժայ եւ Արու Դարի քաղաքներում, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:



Կ'ալկաթայի Սուրբ Պօղոս Մայր Տաճարում նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը
2011-04-26

Ամէն տարի Սուրբ Զատկի տօնին Կ'ալկաթայի քրիստոնեաները հաւաքում են Անգլիական

Սուրբ Պօղոս Մայր Տաճարի յարակից տարածքում՝ փառաբա-նելու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութիւնը: Հոգեւոր եւ մշակութային հանդիսութիւնը եզրափակում է Կ'ալկաթայի կաթոլիկ արքեպիսկոպոսն իր Զատկական պատգամով: Այս տարի առ ի յարգանք Մեծ Եղեռնի զոհերի՝ տօնախմբութեան կազմակերպիչները հրաւիրել էին հնդկահայոց հո-գեւոր հովիւ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հայր Խորէն Յովհաննիսեանին՝ աղօթելու եւ իր պատգամը փոխանցելու:

Հանդիսավար անգլիկան հոգեւորական Հայր Անդրիւ Սիմիկը մինչ հնդկահայոց հոգեւոր հովուին բեմահարթակ հրաւիրելը՝ ներկաներին յայտնեց, որ այս տարի Սուրբ Զատիկը համընկնում է Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցի հետ եւ մասնակիցներին հրաւիրեց աղօթելու 1,5 միլիոն անմեղ

նահատակաց համար:

Հայր Խորենը նախ հայերենով աղօթեց Մեծ Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար, ապա խօսեց Հայոց ցեղասպանության մասին՝ ի մասնաւորի ասելով. «ամեն տարի՝ ապրիլի 24-ին, ողջ աշխարհի հայութիւնը ոգեկոչում է Օսմանեան թուրքերի կողմից հայութեան բնաջնջման փորձը՝ 1915 թուականի 1,5 միլիոն զոհերի յիշատակը: Այդ կոտորածին զոհ գնացին անմեղ ու անպաշտպան մանուկներ, ծերեր, կանայք ու տղամարդիկ... Թուրքական ժխտողականութեան պատճառով Ցեղասպանութիւնից յետոյ մնացած մեր վերքը դեռ չի ապաքինուել, նրանից շարունակում է արիւն ծորալ... Մի ամբողջ ազգ խաչին գամուեց միայն քրիստոնեայ, միայն հայ լինելու համար... է:

Երեկոյին մասնակցեց նաեւ Հայոց մարդասիրական ճեմարանի

երգչախումբը՝ կատարելով հատուածներ Սուրբ Պատարագից:

Ղազախստանի եւ Ղրղզստանի մի շարք քաղաքներում յարգել են Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը

2011-04-26

«Սուրբ Կ'արապետէ եկեղեցում կրօնական արարողութեանը ներկայ են գտնուել հարիւրաւոր հայեր, որոնք մէկ բոպէ լռութեամբ յարգել են հայ նահատակների յիշատակը:

Այնուհետեւ <Վան> հայկական մշակութային կենտրոնում հաւաքի մասնակիցները ներկայ են գտնուել Հայոց ցեղասպանութեանը նուիրուած փաստագրական ֆիլմի ցուցադրութեանը:

Կարագանդայի «սպասկէ յուշահամալրի Հայոց ցեղասպանութեան

նահատակների յիշատակին նուիրուած խաչքար-յուշակոթողի առջեւ այսօր տեղի է ունեցել Մեծ Եղեռնի զոհերին նուիրուած յուշ-հաւաք: Հաւաքի մասնակցիները ծաղիկներ են զետեղել խաչքարին եւ յարգանքի տուրք մատուցել հայ անմեղ զոհերին՝ մէկ բոպէ լռութեամբ:

Ապրիլի 24-ին յիշատակի արարողութիւններ են կայացել նաեւ Պետրոպաւովսկի, Պաւլոդարի, Ուստ Կ՛ամինագորսկի, Կ՛ոստանայի եւ Ղազախստանի այլ հայաշատ քաղաքներում:

Մեծ Եղեռնի զոհերի յիշատակութեան օրը նշուել է նաեւ Բիշքեկում: ՀՀ պատուաւոր հիւպատոսի գրասենեակը եւ «նաիրիէ հասարակական միութիւնը կազմակերպել էին յուշ-հաւաք եւ ծաղկեպսակների զետեղման արարողութիւն՝ հայկական խաչքարի առջեւ:



Ապրիլի 24-25 Սիրիայում անցել են միջոցառումներ՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան զոհերի
2011-04-26

Ապրիլի 25-ին սգոյ արարողութիւն տեղի ունեցաւ Դամասկոսի հայոց գերեզմանատանը՝ ուր

գտնուում է Հայոց ցեղասպանութեան զոհերի յուշահամալիրը:

Յուշահամալիրում Սիրիայում Հայաստանի դեսպան Արշակ Փոլադեանը եւ դեսպանութեան անձնակազմը ծաղկեպսակ զետեղեցին եղեռնի զոհերի յուշարձանին:

Արարողութեանը մասնակցեցին բազմաթիւ սիրիահայեր, Հայաստանի քաղաքացիներ, լրագրողներ, հասարակական գործիչներ:

Նոյն օրը Սիրիայում Հայաստանի դեսպանություն այցելեցին սիրիահայ համայնքի երեք համայնքապետերը, սիրիահայ համայնքի կուսակցական եւ միութենական ղեկավարները, գաղութի ներկայացուցիչները եւ գրառում կատարեցին ոգեկոչման յուշամատենում:



Վաշինգտոնում թուրքերը եւ ադրբեջանցիները փորձել են ձախողել Հայոց ցեղասպանության գոհերի յիշատակի ակցիան

2011-04-26

Ինչպես հաղորդել են PanARMENIAN.Net ին

Վաշինգտոնից, մի քանի տասնեակ

ադրբեջանցիներ եւ թուրքեր նոյնպես եկել էին դեսպանատան մօտ ակցիայի անցկացմանը խանգարելու համար: Դեսպանատան ճանապարհին ադրբեջանցիների մեքենան կանգնեցրել են երկու ոստիկաններ, որոնք պահանջել են բացել մեքենայի բեռնախցիկը, որտեղ եղել են բեյսբոլի մահակներ: Ոստիկանի հարցին, թե ինչու են աւտոմեքենայի ուղեւորները մահակներ տանում խաղաղ ակցիայի համար, վարորդը չի կարողացել պատասխանել:

Ոստիկանները բաց են թողել մեքենան, որը շարժուել է թուրքական դեսպանատան մօտ, որտեղ արդեն հաւաքուել էին հայերը՝ Հայոց ցեղասպանության գոհերի յիշատակին յարգանի տուրք մատուցելու համար:

Թուրքերը եւ ադրբեջանցիները աղմուկ են բարձրացրել՝ բղաւելով վիրաւորական կարգախօսներ: Եթէ չլինէր ոստիկանութեան

միջամտութիւնը, դեսպանատան մօտ կարող էր ծեծկոտուք սկսուել, սակայն ոստիկաններն արագ կասեցրել են հայերի ցոյցը ձախողելու թուրքերի փորձերը: Ադրբեջանցիները եւ թուրքերը ձեռքերում պահել են ցուցապաստառներ «շնորհակալութիւն Ամերիկա, որ չես պատասխանում հայկական մեղադրանքներին՝ գրութեամբ:

Թուրքիան եւ Ադրբեջանը Հայոց ցեղասպանութիւնն անուանում են «մտացածին եւ հսկայական ջանքեր են գործադրում՝ համաշխարհային հանրութեան կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը թոյլ չտալու համար:



Արամ Ա-ն կարեւորում է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ ստեղծուած յանձնաժողովի գործունէութիւնը

2011-04-26

Ապրիլի 23-ին Հայ կաթողիկէ պատրիարքարանի բակում կազմակերպուել էր «հսկման երեկոյ:

Միջոցառման ժամանակ ելոյթ ունեցան Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարեանը, “վանայ ձայն” ռադիօկայանի տնօրէն Աւետիս Կիտանեանը, “արարատ” թերթի ներկայացուցիչ Ալեքսան Քեօշքարեանը եւ Telelumiere քրիստոնէական հեռուստակայանի լրագրող Լօռա Նասանուն :

Երաժշտական համարներով հանդէս եկան հայկական կրթօջախների սաները:

Դեսպան Քոչարեանը նշեց, որ 96 տարի առաջ Օսմանեան կայսրութիւնում կազմակերպուած ոճրագործութիւնն իր հրէշաւորութեամբ եւ անմարդկային դաժանութեամբ նախադէպը չունէր համաշխարհային պատմութեան մէջ:

Միջազգային հանրութիւնը պէտք է միասնական լինի ցեղասպանութեան դատապարտման, կանխարգելման գործում:

Ապրիլի 24-ին՝ ուշ երեկոյեան Անթիլիասի մայրավանքի մատուռի մօտ մատուցուած հոգեհանգստի արարողութիւնից յետոյ, ՀՀ դեսպանութեան անձկակազմի ուղեկցութեամբ դեսպանը ծաղկեպսակ զետեղեց մատուռի առջեւ: Այնուհետեւ տեղի ունեցաւ ոգեկոչման արարողութիւն, որի ընթացքում ելոյթ ունեցան ՀՅԴ, ՌԱԿ, ՄԴՀԿ կուսակցութիւնների ներկայացուցիչները, դեսպան Աշոտ Քոչարեանը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա-ն:

Ելոյթ ունեցողներն անդրադարձան Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման կարեւորութեանը եւ պատմական արդարութեան վերականգնման խնդիրներին : Դեսպան Քոչարեանը նշեց, որ Հայոց ցեղասպանութիւնը մեր ժողովրդի պատմութեան ամենադաժան եւ ողբերգական էջն է, որի հետեւանքով հայ ժողովուրդը կորցրեց իր պատմական հայրենիքը, 1,5 միլիոն մարդկային կեանք եւ հազարամեակների ընթացքում ստեղծուած հոգեւոր եւ նիւթական հսկայական ժառանգութիւն: Այդ ծանրագոյն յանցագործութիւնն ուղղուած էր ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ ողջ մարդկութեան դէմ: Նա ընդգծեց, որ ցեղասպանութիւն վերապրած մեր հայրենակիցները շատ կարճ ժամանակահատուածում Լիբանանում իշխանութիւնների եւ ժողովրդի եղբայրական վերաբերմունքի շնորհիւ ստեղծեցին մի ծաղկուն հայկական գաղթօջախ բազմաբնոյթ կառոյցներով, կարողացան պահպանել հարուստ ազգային մշակոյթն ու արժէքները եւ լինելով լիիրաւ քաղաքացիներ՝ իրենց աշխատասիրութեան եւ տաղանդի շնորհիւ շարունակեցին իրենց

ստեղծագործական կեանքը եւ աճեցրեցին հայախօս ու հայրենասէր նոր սերունդներ: Շնորհակալութիւն յայտնուեց Լիբանանին, մասնաւորապէս նրա խորհրդարանին Հայոց ցեղասպանութեան ճանաչման համար: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա-ն կարեւորեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող՝ ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծուած պետական յանձնաժողովի ապագայ գործունէութիւնը Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ:

Ելոյթ ունեցողները միակարծիք էին, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումն ու դատապարտումը հայ ժողովրդի համար պատմական արդարութեան վերականգնման խնդիր է: Ցատուկ ընդգծուեց Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի միասնականութեան անհրաժեշտութիւնը արդի աշխարհի բոլոր մարտահրաւերների յաղթահարման եւ հայոց պետականութեան հզօրացման ենթատեքստում: Ապրիլի 25-ին Լիբանանում ՀՀ դեսպանատանը բացուեց Ցեղասպանութեան գոհերի ոգեկոչման յուշամատեան: ՀՀ դեսպանութիւն այցելեցին եւ յուշամատեանում իրենց գրառումները թողեցին բազմաթիւ խորհրդարանականներ, նախարարներ, կուսակցութիւնների ներկայացուցիչներ, հոգեւորականներ, տարբեր երկրներից դիւանագետներ: Ցուցադրուեցին ժապաւեններ Հայոց ցեղասպանութեան մասին: Այցելուներին ներկայացուեց հայ գրականութիւնը, տեղի ունեցաւ նկարների ցուցահանդէս:

Նոյն օրը ՀՀ դեսպանութեան անունից ծաղկեպսակ դրուեց Հայ կաթողիկէ

պատրիարքարանի բակում տեղադրուած Հայոց ցեղասպանութեանը նուիրուած յուշակոթողին:

Այնուհետեւ Հայկազեան համալսարանում տեղի ունեցաւ պօեզիայի, պատմուածքների եւ երաժշտութեան երեկոյ՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին: Հնչեցին Միամանթոյի, Գեորգ Էմինի, Յովհաննէս Թումանեանի եւ Ղեւոնդ Ալիշանի բանաստեղծութիւնները: Հայաստանից ժամանած Աննա Մաիլեանի ղեկավարած էթնոյ վոկալ տրիօն կատարեց Կոմիտասի եւ Միսիթար Այրիւանեցու ստեղծագործութիւնները: Երեկոյի ընթացքում ՀՀ դեսպանը հաւաքուածների ուշադրութեանը ներկայացրեց պատմական փաստեր եւ վկայութիւններ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ եւ նշեց, որ համայն աշխարհի հայերն այս օրերին ոգեկոչում են ցեղասպանութեան անմեղ նահատակների յիշատակը: Միջոցառմանը մասնացեցին նաեւ պաշտօնեաներ, օտարերկեայ դիւանագէտներ, միջազգային իրաւունքի եւ մարդու իրաւունքների մասնագէտներ, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:



Իրանի գլխաւոր հայկական համայնքները նշել են Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցը
2011-04-26

Նոր Զուղայի Սբ. Ստեփանոս եկեղեցում տեղի է ունեցել հսկումի արարողութիւն, իսկ յետոյ մեկնարկել է աւանդական ցոյցը՝ մոմերով երթը: Ներկաները շարժուել են դէպի Սբ. Ամենափրկիչ վանք, որտեղ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի յուշարձանի մօտ տեղի է ունեցել բողոքի համահաւաք, մոմավառութիւն եւ ծաղիկների մատուցում:

Բողոքի համահաւաքի ընթացքում ելոյթներ են ունեցել՝ Սպահանի հայոց

թեմի առաջնորդ Տ. Բարգէն եպս. Չարեանը, Սպահանի հայոց Թեմական խորհրդի աստենապետ Նոել Մինասեանը եւ Հայոց Ցեղասպանութեան 96-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Զուղայի յանձնախմբի ներկայացուցիչը:

Բողոքի համահաւաքին յաջորդել է «ռուբենէ երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած բաց զրուցարանը, որի ընթացքում համայնքի երիտասարդները sms քուէարկութիւններով եւ ելոյթներով իրենց տեսակէտներն ու առաջարկներն են յայտնել Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով առաջացած կորուստների եւ Ցեղասպանութեան փաստն ուրանալու Թուրքիայի պատճառաբանութիւնների մասին:

Ապրիլի 24-ին երեկոյեան թեհրանահայերը հաւաքուել էին Սբ. Սարգիս եկեղեցում՝ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակների յիշատակը, որի ընթացքում տեղի ունեցաւ հոգեհանգիստ, ծաղիկների մատուցում Նահատակների յուշարձանի մօտ, եւ երիտասարդական համահաւաք:

Ծրագիրը սկսուեց հոգեհանգստեան արարողութեամբ, որը նախագահում էր Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը. այն կատարուեց եկեղեցու բակում գտնուող Նահատակների յուշարձանի մօտ: Հոգեհանգստեան արարողութեանը մասնակցում էր Ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը:

Մեծ Եղեռնի Նահատակների հոգիների խաղաղութեան համար յուշարձանի մօտ կատարուող կրօնական արարողութիւնից եւ խնկարկումից յետոյ ներկաներին իր խօսքն ուղղեց թեմակալ առաջնորդը:

Սրբազան Հօր ելոյթից յետոյ սկսուեց ծաղիկների մատուցման արարողութիւնը: Ծաղկեմատոյցից յետոյ տեղի ունեցաւ երիտասարդական համահաւաք, յայտնում է Հայաստանի ԱԳՆ մամլոյ ծառայութիւնը:



Փարիզում Հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին նուիրուած ցոյցին մօտ 5 հազար մարդ էր հաւաքուել

2011-04-25

Ապրիլի 24-ին Փարիզում կայացաւ Օսմանեան կայսրութիւնում իրագործուած Հայոց

ցեղասպանութեան 96-րդ տարելիցին նուիրուած հանրահաւաք: Ակցիան սկսուեց Թուրքիայի դեսպանատնից, որի դիմաց հաւաքուածները պահանջում էին ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Այնուհետեւ ցոյցը շարունակուեց Կոմիտասի յուշարձանի մօտ:

Ակցիայի ընթացքում Ֆրանսիայի հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչները կոչ էին անում մայիսի 4-ին հաւաքուել Սենատի մօտ, որտեղ Սահմանադրութեան յանձնաժողովում քննարկուելու է Հայոց ցեղասպանութեան ժխտման քրեականացման մասին օրինագիծը: Ինչպէս յայտնի է դարձել PanARMENIAN.Net ի թղթակցին, օրինագիծն արդէն ընդգրկուել է յանձնաժողովի օրակարգում, եւ մայիսի 4-ին կը մեկնարկեն դրա քննարկումները:



Յայտարարութիւններ «Վերածնունդ» Երաժիշտ-կատարողների ՄԻԶԱԶԳԱՅԻՆ Մրցոյթ-փառատօնի՝ ԱՐԴԷՆ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԶՈՑԱՌՈՒՄ

2011-04-28

«վերածնունդ է փառատօնը՝ որպէս արուեստի տօն, միջմշակութային փոխառնչութիւնների, փորձի փոխանակման, արուեստի նկատմամբ վերաբերմունքի ձեւաւորման հրաշալի հնարաւորութիւն է:

Իրականացուելով 2007 թուականից՝ այն հասցրել է դառնալ սպասուած ու սիրելի մշակութային միջոցառում Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս բնակուող արուեստասէր հասարակութեան, մասնաւորապէս՝ պատանիների ու երիտասարդների համար, որոնք հաղորդակցւում են դասական արուեստի հետ, ներկայացնում, յաճախ նաեւ բացայայտում են սեփական կարողութիւնները:

Յաջողութիւն եւ բարի երթ փառատօնի բոլոր մասնակիցներին:

ՀՀ սփիւռքի նախարարութեան աշխատակազմի

Համահայկական ծրագրերի վարչութիւն